# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 21-Ն

## 2015թվականի"ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ" ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և <<Տեղական Տուրքերի և Վճարների Մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ,8-րդ և 10-րդ,11-րդ հոդվածների պահանջներով

ՈՐՈՇԵՑԻՆ- Սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի տեղական տուրքը սահմանվում է.

Հիմնական օբյեկտների համար՝

1)Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող ,անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝7500դրամ:

2)Սույն կետի<ա>ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա)201-ից մինչև 500քմ ընհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝-10000դրամ

բ)501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝-15000 դրամ

գ)1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝-15000դրամ

3) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝-1000դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար ,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝-1500 դրամ:

3 . Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է՝-

2000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1)Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 6000 դրամ:
   2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 6000 դրամ:
5. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ - 350

   դրամ մեկ քառակուսի մետրի համար:
6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ, կրկնօրինակներ, տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ -0 դրամ:
7. Համայնքի տարածքում հող հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալությամբ տրամադրելու, անհրաժեշտ չափումներ կատարելու համար սահմանել վճար՝ - 1000 դրամ:
8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար սահմանել վճար՝ -1000 դրամ:
9. Աղբահանության գումար՝ մեկ շնչի համար սահմանել ամսական – 3 դրամ .

10. 1,2,3, կետեի համար կիրառվել է 0.5 գործակիցը :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՈՎՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՀՀ • 04201558 •

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 22-Ն

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇԵՑԻՆ- 1,Հաստատել 2015թ-ի Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | | 230000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | 1 | 158000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 2.3-1 | 1 | 157000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 3.1-1 | 1 | 110000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 98000 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | | |
| Գրադարանավար | | 1 | 66200 |
| ՏԵԽՄԻԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| Համակարգչային օպերատոր | | 1 | 71000 |

| | | |
|---|---|---|
| Հավաքարար | 1 | 66200 |
| Պահակ | 1 | 66200 |
| | | |

Ընդամենը՝ 1.022600 (մեկ միլյոն քսաներկու հազար վեց հարյուր) հազար դրամ

2.Քանի որ,գյուղապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության 2-րդ կարգի մասնագետի(ծածկագիր 3:3-1) հաստիքը թափուր է և աշխատակազմում առկա համայնքային ծառայողները ունեն բավարար աշխատանքային ծանրաբեռնվածություն, առաջարկել Արովյան համայնքի ղեկավար պարոն Ա. Հարությունյանին գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3.Ուժը կորցրած ճանաչել Արովյան համայնքի ավագանու 24.07.2014թ-ի թիվ 14-Ն որոշումը:

4. Սույն որոշման 1-ն և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Արովյանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼևՈՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04201558

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2014թվականի N 23

## 2014Թ-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ:

Հիմք ընդունելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջները՝

Հաստատել 2014թ-ի գույքագրող հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքի սեփականություն հանդիսացող՝գյուղապետարանի գույքի, մշակույթի տան գույքի և գրադարանի գույքի ամենամյա գույքագրման ցանկը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼՆՈՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ * 04201558 *